

Լիբանանցի ընդդիմադիր քաղաքական գործիչներ այսօր կեսօրէ առաջ հանդիպում կ'ունենան խորհրդարանի նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնիի տան մէջ: Հանդիպումին պիտի մասնակցին նախկին վարչապետներ Սէյիմ Հըս եւ Օմար Քարամէ, երեսփոխաններ Պուրբոս Հարպ եւ Նայիլա Մուաուատ, նախկին երեսփոխան Ալլաբ Մանսուր եւ Հիւսէյն Հիւսէյնի: Կը սպասուի, որ հանդիպումին մասնակցները հրապարակեն հաղորդագրութիւն մը, որ կը յայտարարէ կազմութիւնը քաղաքական նոր դաշինքի մը: Հաղորդագրութիւնը պիտի յտակացնէ նաեւ դաշինքի կազմութեան պատճառները եւ կեցնածքները՝ առկայ հարցերուն առնչութեամբ:

ՍՈՒՍԱ ՍԱՏՇՐԻ ԱՆՅԵՏԱՑՄԱՆ 25ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ ԶԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Նախագահ Վոր. Էմիլ Լահուտի, վարչապետ Ռաֆիք Հարիրիի ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ նախարարներու, երեսփոխաններու եւ քաղաքական գործիչներու եւ մեծ թիւով ժողովուրդի մասնակցութեամբ, երէկ, Պալատքի մէջ տեղի ունեցաւ Մուսա Սատրըի անհետացման 25ամեակին նուիրուած հանդիսութիւն մը, որուն ներկայ գտնուեցաւ նաեւ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ պատւիրակութիւն մը, գլխավորութեամբ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Յովիկ Միխարեանի:

Հանդիսութեան ընթացքին խօսք առաւ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի, որ հրաւիրեց լիբանանեան կառավարութիւնը որդեգրելու Մուսա Սատրըի դատը եւ արաբական ու միջազգային գետնի վրայ աշխատանք տանելու, որպէսզի Լիբանան փաստէ աշխարհին, որ ռեւէ լիբանանցիի դէմ գործուած ռմբար, ռմբար է լիբանանեան սկզբունքներուն դէմ: Ան դիտել տուաւ, թէ աշխարհը պէտք է գիտակցի Մուսա Սատրըի առեւանգումով Լիպիոյ վարչակարգի կատարած ռմբարի եւ անկէ ետք անոր իրականացուցած տասնեակ ռմբարգործութիւններուն:

Լիբանանի ներկայ իրավիճակին անդրադառնալով, ան կոչ ուղղեց իշխանութեան վրայ եւ ընդդիմադիր դիրքերու վրայ գտնուողներուն կասեցնելու քաղաքական պայքարն ու հակասական կեցնածքները եւ քանալու բոլոր թղթածրարները, դատական իշխանութեան աշխատանքներէն հեռու մնալով եւ ձգելով, որ ան իր գործը տանի առանց միջամտութիւններու: Ան դիտել տուաւ, որ անհրաժեշտ է իրականութեան շարք՝ էջ 10

ՊԱՂՏԱՏԻ ՍԷՋ ՊԱՔԷՐ ՀԱՔԻՍԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ ԲԱԶՄԱՀԱԶԱՐ ԻՐԱՔՑԻՆԵՐ



Տասնեակ հազարաւոր շիի իրաքցիներ երէկ մասնակցեցան այսօրվա Մոհամէտ Պաքէր Հաքիմի յուղարկուողութեան թափօրին Պաղատի մէջ, ուրկէ կրօնապետին մարմինը փոխադրուեցաւ շիիներու սրբավայրերէն Քարպալա, ուր եւս յուղարկուողութեան թափօր մը պիտի կազմակերպուի: Ապա՝ Հաքիմի մարմինը պիտի վերադարձուի Նաժաֆ, ուր պիտի թաղուի վաղը: Կը նախատեսուի, որ հարիւր հազարաւոր շիիներ մասնակցին Հաքիմի յուղարկուողութեան Նաժաֆի մէջ, ուր սպաննուած էին կրօնապետն ու 82 ուրիշներ Ուրբաթ օր, ականուած ինքնաշարժի մը պայթումին պատճառով:

Պաղատի մէջ թափօրին մասնակցողները կը դատապարտէին ռմբարը՝ ամբաստանելով Սատուամ Հիւսէյնիի հետեւորդներն ու Պաաս Կուսակցութիւնը: Սգակիրները կ'ըսէին նաեւ, որ Հաքիմ բոլոր իրաքցիներուն համար էր եւ թէ անոր մահը կորուստ է բոլորին՝ քիւրտ, շիի, սիւննի կամ թուրքմէն:

Ուրբաթ օրուան գործողութիւնը եւ Հաքիմի սպանութիւնը դատապարտուած էր շրջանային Շարք՝ էջ 2

«ԱԶԳԱԿ»Ի ՄՐՅԱՆՔ

«Հարցարան»-ի 6»-ին ճիշդ պատասխանեցին 160 մասնակիցներէն 140ը: Յեղ փիճակաձգութեան, ԱՐՄԻԿ ՔԷՍՊԼԷՆՆ շահեցաւ «Պէրրոր-Վառնա-Պէրրոր» վեցերորդ փոսթը (ընդամենը՝ 10):

Կը խնդրուի բախարաւոր մասնակիցէն «Ազգակ»-ի խմբագրատուն ներկայանալ առաւելագոյնը՝ Հինգշաբթի, 4 Սեպտեմբերին սպանալու համար իր մրցանակը:

ՄԻՆՉ ՀԱՄԱՐԻ ԳԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ԱՎՔԵԿՈՒՄԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒ

ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ՆԵՐԽՈՒԺԵԼ ԿԱԶԱ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն Աշքելոնի բնակչութեան խոստացաւ իրենց քաղաքը փրկել Համասի հրթիռներէն եւ չարտօնել, որ ծովեզերեայ այս աւանը ռազմաճակատ դառնայ Համասի հետ պատերազմին:

Շարոն, որ կը խօսէր դպրոցական վերամուտին առիթով, աւելցուց, որ Իսրայէլի պետութիւնն ու ժողովուրդը իրաւունք ունին խաղաղութեամբ եւ ապահովութեամբ ապրելու: Այս իրաւունքներուն գծով որեւէ վիջում պիտի չկատարուի:

Համասի պիւնտայներ անցեալ Հինգշաբթի օր «Քասսամ» տիպի հրթիռ մը կապայէն Աշքելոն արձակած էին: Հրթիռը թէեւ քոհչէր պատճառած մտկայն սարսափ մատնած էր բնակիչները:

Պաշտպանութեան նախարար Շաուլ Մոֆաօ իր կարգին երէկ ըսաւ, որ բանակը կը քննարկէ Կապ մտնելու ծրագիր մը, եթէ իսլամական շարժումը հակակշիռի չենթարկուի պաղեստինեան իշխանութեան կողմէ: Մոֆաօ աւելցուց, որ երբ պահը յարմար նկատուի, բանակը Կապ պիտի ներխուժէ: Ան շեշտեց, որ Համասի բոլոր անդամներուն դէմ պատերազմ յայտարարուած է եւ թէ անոնցմէ ուրեք մէկը ապահով ու պաշտպանուած պէտք չէ չլինի:

Վերամուտին առի-



Ութամեայ Այա Ֆայետա դուրս կը բերուի հիւանդանոցէն՝

թով, Իսրայէլ զօրակոչի ենթարկած էր 12 հազար ոստիկաններ եւ 5 հազար կամաւորներ կանխարգիլելու համար որեւէ արարք, որ կրնայ սպառնալ 1,4 միլիոն աշակերտներուն դպրոց վերադարձին: Ներքին գործոց նախարար Յաիի Հաւեկի ըսաւ, որ անհրաժեշտ էր բոլոր միջոցառումները որդեգրուած են երաշխաւորելու համար մանուկներուն եւ պատանիներուն ապահովութիւնը: Ան աւելցուց, որ «պաղեստինեան ահաբեկչական կազմակերպութիւններ կ'ուզեն օգտագործել դպրոցական տարեշրջանի վերաբացումը՝ յարձակումներ գործելու համար»: Իսրայէլի մէջ վերամուտի առաջին օրը երէկ էր:

Իսրայէլեան ուժեր իսան Եունիսի մէջ սպաննեցին ութամեայ պաղեստինցի աղջնակ մը, որ իր կարգին կը պատրաստուէր դպրոց վերադառնալու: Պաղեստինեան աղբիւրներ յայտնեցին, որ Այա Ֆայետա սպաննուեցաւ, երբ Իսրայէլացի պիւնտայներ մտակալ բնակեցման վայրէ մը կրակ բացին խումբ մը պաղեստինցիներու վրայ: Իսրայէլեան բանակը սակայն կ'ըսէ, Շարք՝ էջ 3

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀՈՍԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱԻՈՒՄ

Մեկնելով այն որոշումներէն, որոնք առնուեցան Պապատայի պալատին մէջ նախագահ Վոր. Էմիլ Լահուտիի եւ էլեկտրականութեան ընկերութեան պատասխանատուներուն եւ համարարութիւններուն ներկայացուցիչներուն կողմէ, էլեկտրականութեան ընկերութիւնը հաստատեց, թէ էլեկտրականութեան ընդհատումները պիտի նուազին եւ լիբանանցիները անվար ծամեր էլեկտրականութիւն պիտի ունենան, քան՝ անցեալ 9 ժամուան փոխարէն՝ 21 ժամ, 9 ժամուան փոխարէն՝ 24 ժամ մատակարարում Լեռնայի շրջանի մէջ 22 ժամ, Մարժա-իոնի 18 ժամ 8 ժամուան փոխարէն՝ 22 ժամ, Շարք՝ էջ 2

ՄԱՍՆԱԿՑԵՑԷՔ «ԱԶԳԱԿ»Ի ՄՐՅԱՆՔԻՆ ԷՋ 3

ԸԱՅԿԱԿԱՆ ԾԽԱԽՈՏԸ ԱՇԽԱՐՀԱՐՈՋԱԿ ԵՒ ԻՐԱՅԱՏՈՒԿ ՖԻԼԹԵՐՈՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Cigaronne

Keeps smoke out of your face and eyes
ՕՈՒԿՐ ԻՏԵՆՈՒ ԿՐ ԿԱՏԻ ԱՅՔԵՐԵՂ ԵՒ ՂԷՄՔԻՂ

Սովորական ծխախոտը
Conventional filter

ՍԻԿԱՐՈՆ ծխախոտը
CIGARONNE

Protects from getting fingers yellow, from touches of wet, dirty, greasy fingers
Կը պաշտպանէ մատները դեղնելէ, քրտնելէ եւ աղտոտելէ

Սովորական ծխախոտը
Conventional filter

ՍԻԿԱՐՈՆ ծխախոտը
CIGARONNE

Prevents the penetration of the percolated tar and nicotine into the oral cavity
Կարգիլէ թարի եւ ճիւղիկի անցնող թերմէն եւ կոկոսիլէն

Սովորական ծխախոտը
Conventional filter

ՍԻԿԱՐՈՆ ծխախոտը
CIGARONNE

«CIGARONNE» FILTER - HOLDER CIGARETTE

وزارة الصحة تحذّر: التدخين يؤدي إلى أمراض خطيرة ومميتة
مستوردة وموزعة مباشرة من قبل إدارة حصر التبغ والتنباك اللبنانية

ՍԱՆՐԱՍԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՍԵԼ SAHALCO ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԿԵՆ. 04 - 712409, 03 - 201957 ԵՒ 03 - 201967 ԹԻԲԵՐՈՒՆ

ԸՍՏ ՂԱԶԻ ԱՐԻՏԻԻ

ՄԻԱՆՎԱԿԱՆՈՒԹԵԱՐԻ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՀԱՍՏԱՏՈՒԻ

Կ'ԸՍԵ ՍՖԵՅՐ ՊԱՏՐԻԱՐԲ

Մարտինիերու Նասրալլա Սֆէյր պատրիարքը երէկ Տիմանի մէջ արտասանած իր քարոզչին մէջ նշեց, թէ միասնականութեամբ կարելի է խաղաղութիւն հաստատել եւ շեշտը դրաւ Լիբանանի ներկայ ցաւալի կացութեան վրայ, որ ժողովուրդին չի կրնար ապահովել իր անհնէն տարական կարիքները:

Ան դիտել տուաւ, որ աշխարհի տարածքին եւս փոխադարձ գործակցութեամբ եւ համաձայնութեամբ կարելի է խաղաղութիւն ու կայունութիւն հաստատել, յարգել իւրաքանչիւր ժողովուրդի ու պետութեան իրաւունքները: Ներկայի իրավիճակին դէմ յանդիման, խաղաղութիւնը շատ հեռու կը թուի ըլլալ, ըսաւ պատրիարքը եւ աւելցուց, որ այսօր մարդիկ կ'առաջնորդուին ռիսկալիութեամբ, ատելութեամբ եւ ուտի տակ կ'առնեն ամէն ինչ անհաշի ու անմարդկային ձեւով:

Լիբանանեան կացութեան ակնարկելով ան հաստատեց, թէ Լիբանանցիները կ'ապրին աղքատ ու անապահով կացութեան մէջ եւ անոնց իրաւունքները պաշտպանելու, անոնց ջուր, էլեկտրականութիւն, մաքրութիւն եւ առողջապահութիւն ապահովելու կոչուած անձերը լաւ գործունէութիւն չեն ծաւալեր եւ ժողովուրդը հետզհետէ կը խորանալ իր յուսահատութեան եւ վատ կացութեան մէջ:

ՔՈՐԱՅԹԵՄԻ ՄԵՋ

ԸԱՐԻՐԻ - ԺՈՍՊԼԱԹ ԸԱՆՂԻՊՈՒՄ

Վարչապետ Հարի-րի Սարտինիայէն վերադառնալով, երէկ, երէկոյեան ժամը 7:00ին Քորայթէմի իր պալատին մէջ հանդիպում մը ունեցաւ Ժոզֆ Դոլըրը պարական Հանդիպումի նախագահ երեսփոխան Ուալիտ Ժոնպարի գլխաւորած պատուիրակութեան հետ, որուն մաս կը կազմէին հանդիպումի անդամ նախարարներ եւ երեսփոխաններ: Ապա վարչապետը դռնփակ հանդիպում մը ունեցաւ Ուալիտ Ժոնպարի հետ, որ հանդիպումէն ետք ըսաւ, թէ արտքաջ խօսակցութեան մթնոլորտի մը մէջ կայացած երկխօսութեան ընթացքին անոնք համաձայն գտնուած էին կարգ մը կէտերու շուրջ, իսկ



տարակարծիք՝ ուրիշ-ներու շուրջ: Ան դիտել տուաւ, թէ այս խորագիրներով բաւարարած պիտի շարունակեն գործակցել վարչապետ Հարիրիի, ինչպէս նաեւ նախագահ Լա-հուտի հետ, որ սկսած է բարեկարգումներու արշաւի մը: «Մենք բարեկարգումի կողմնաւոր յարգումներու մէջ մտնել: Երէկոյեան ժամը 9:00ին, վարչապետ Հարիրի հանդիպում ունեցաւ նաեւ ջուրի եւ ուժանիթի նախարար Այուպ Հրմալիտի հետ եւ անոր հետ քննարկեց էլեկտրականութեան իրավիճակը:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՕՂԱՆԱԻՐ ԽԱՆՏԵՑԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՕՂԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԸ


Երէկ, իսրայէլեան պիտուրական օդանաւեր խախտեցին Լիբանանի օդային սահմանը եւ թռիչք կատարեցին Մարժայունի, Հասպայա-յի եւ Խիամի շրջաններուն վերէն: Հրկայալիա հաղորդագրութեամբ մը տեղեկացուց, թէ հակապարտէզ իրանական սահմանը խախտող օդանաւերուն:

ՊԱՐՏԱՏԻ ՄԵՋ ՊԱՔԷՐ ՀԱՔԻՍԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ՅՈՒՂԱՐԿԱԿՈՐՈՒԹԵԱՆ...

ու միջապային պետութիւններու ու ղեկավարներու կողմէ: Իրաքի իշխանութիւնները իրենց կարգին յայտնեցին, որ տեղեկութիւններ ստացած են ակաւնուած երէք այլ ինքնաշարժներու գոյութեան մասին:

Բարձրաստիճան պաշտօնատար մը ըսաւ, որ ինքնաշարժները ենթադրաբար Նաժաֆ կը գտնուին: Ան աւելցուց, որ ուստիկանութիւնը արշաւի մը ձեռնարկած է, գտնելու համար ինքնաշարժները: Ուստիկանապետ մը իր կարգին յայտնեց, որ ուստիկանութիւնը յաջողած է ձերբակալել չորս կասկածելիներ, որոնք կրնան մեղաւորուել ըլլալ Ուրբաթ օրուան գործողութեան: Ան աւելցուց, որ երկուքը իրաքցիներ են, որոնք նախկին իշխանութեան հետեւողներն են, իսկ միւս երկուքը՝ արաբ իսլամներ: Ըստ ուստիկանապետի ու չորս ամբաստանելիները խոստովանած են, որ պայթուցիկ լրենք կազմակերպած ու գործողութեան դրած են:

Հաքիմի ահաբեկումը նեղ կացութեան կը մատնէ նաեւ ամերիկեան ուժերը, որոնք կը թռիչք կարողութիւնը չունին կացութիւնը հակակշիռի տակ առնելու: Մէկ ամուսնան ընթացքին ահաբեկչական երրորդ գործողութիւն էր, որ տեղի կ'ունենար եւ ամերի-



դէմ պիտի չկանգնի Իրաքի մէջ ամերիկեան իրամասնատարութեամբ բազմապատեւ ուժի մը կազմութեան, պայմանաւ որ անիկա լիապօրոշմով ըլլալ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին կողմէ:

Փութին, որ կը խօսուի Բտալիոյ վարչապետ Սիլվիո Պերլուսոնիի հետ ունեցած մամուլի միացեալ ամուսնու մը ընթացքին, ըսաւ որ Ռուսիա չ'առարկէր ամերիկեան իրամասնատարութեամբ միջապային ուժի մը, որուն համար սակայն Ապահովութեան խորհուրդի որոշում մը անհրաժեշտ է: Ան աւելցուց, որ ինչ պատրաստ է զորակազմը միջապային ուժի մը, որուն համար սակայն Ապահովութեան խորհուրդի որոշում մը անհրաժեշտ է: Ան աւելցուց, որ ինչ պատրաստ է զորակազմը միջապային ուժի մը, որուն համար սակայն Ապահովութեան խորհուրդի որոշում մը անհրաժեշտ է:

Պերլուսոնի, որ կը նախագահէ Եւրոպական Միութեան ընթացիկ նստաշրջանին, ըսաւ որ կը փորձէ եւ-

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ...

- Հիւսիսային Պէրսիայի շրջաններ եւ շրջակայքը՝ 18 ժամ 8.5 ժամուան փոխարէն
- Հարաւային այն շրջանները, որոնք կը մատակարարուին Բատիշայի էլեկտրականութեան կէդրոնին կողմէ՝ Թրիփոլի, Շըք-Չ, Չոարթ, Ըհտէն, Պշարի, Արպ, Քուրի

ՊԱՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒՄՆԵՐ

Միւս կողմէ էլեկտրականութեան հարցին կացութիւնը սեր-

ՍՍԱՅԱՆԸ «JUSTICE PAIX RECONCILIATION»

Ընդհանրապէս Արամ Ա կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիաս, 2003

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ Մ. ԵՒ Հ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԸՆԴՄԱՐԱՆԻ ՍԱՆՏԵՐՈՒ ՖՈՆՏԻՆ

●Արա Հալաճեանի ընդ Մակի Սիմասեանի ամուսնութեան ուրախ առթիւ, օրը. Ազգի Բարուակեան 30,000 Լ.Ո.

ՄԱՀԱԶԳ

- Տիկին Եւա Եափուճեան եւ զաւակները՝ Միհրան, Մարօ, Գոհար եւ Մովսիկ
- Տէր եւ տիկին Ոսկան եւ Ռիթա Եափուճեան եւ զաւակուքը՝ Տէր եւ տիկին Կարապետ եւ Վերոն Գրիգորեան եւ զուստրը
- Տէր եւ տիկին Սարգիս եւ Լուսին Հատիտեան եւ զաւակուքը՝ Տէր եւ տիկին Ճորճ եւ Սեդա Թորոսեան եւ զաւակուքը՝ Տէր եւ տիկին Յակոբ եւ Մարիա Թովմասեան եւ զաւակուքը
- Տէր եւ տիկին Նազիկ եւ Սալի Աճէմեան եւ զաւակուքը
- Տէր եւ տիկին Վահէ եւ Սիւզի Փարլաքեան եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, Հօր, աներոյ, մեծ Հօր, քեռայրին եւ Հարազատին՝

ԻԱԶԱՏՈՒՐ ԵԱՓՈՒՃԵԱՆԻ (Ծնեալ՝ Ատաճ, 1923ին)

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 30 Օգոստոս 2003, առաւօտեան ժամը 4:00ին, իր բնակարանին մէջ, յետ երկար տեւած հիւանդութեան:

- Յուշարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Շաբաթ, 30 Օգոստոս, կէսօրէ ետք ժամը 3:30ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, ուր կ'էմբոստեցան մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:
- Ներկայ ընդունել իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը՝ Տորա, «Թեյէ Լիմիթը» պատկերասփիւռի կայանին ղեկավար, 3րդ յարկ:

ԿՈՒՉՈՒԻ

●Կաճառատան մը համար՝ վաճառող ներկայացուցիչ օրիորդ մը: Վճարումի լաւ պայմաններով: Դիմել՝ հեռ. 01 - 255805 եւ 01 - 265070:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՄԱՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- 8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- 8:45.- «Ատողեր»
- 9:00.- «Ռատիօ - Թատրոն», հեղինակ՝ Շահանգուլիստ. կը ներկայացնեն Մարի Ռոզ Մանուկեան եւ Մանուկ Մարգարեան
- 9:40.- «Առաւօտեան տուն»
- 10:35.- «Երկիր Նայիրի»՝ Հայաստանի մշակութային հարստութիւններու եւ տարբեր մարզերու զբօսաշրջային վայրերու ծանօթացում
- 11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
- 3:00.- Արաբերէն յայտագիր
- Հարցազրոյց ֆիզիոթերապիստներու սենտիքային նախագահ Ժորժ Պուլիքի հետ
- 4:45.- «Վաճառ սփոր»՝ անցնող շաբաթուան մարզական լուրերու ներկայացում
- 6:00.- «Ղալար բարտի»՝ հայերէն հարազատ երգի մատուցում
- 8:00.- «Ալօ Վանայ Զայն»՝ խաղ - մրցանք՝ ուղղակի ձայնասփռում

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱՐԱԺԻՆ

● Ճամբորդութեան պատճառով, Ազգի սկիզբը, նորակառոյց. 160 քառ. մետր, 3 մնջասենեակ, հիւրասրահ, ճաշասրահ, 3 բաղնիք, կեդրոնական էր ընտրիսիոնէ, ջրհոր, ժէնթը, կառատուն: Գեղատեսիլ դիրք: Դիմել՝ հեռ. 01 - 267909:

ՌՈՒՍԻԱ ԶՈՐԱԿԻԳ ՊԻՏԻ ԿԱԼԳՆԻ ԲԱԶՄԱԶԳԵԱՆ ՈՒՇԵՐՈՒ

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին յայտնեց, որ Մոսկուա

ԱԶԳԱՅԻՆ ԱՔՈՐ ԳԱՍԱՐԸԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

2003-2004 ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՐԶԱՆ
ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋ = 150000 Լ.Ո.
Արձանագրութիւնները տեղի պիտի ունենան Երկուշաբթի Ուրբաթ առաւօտեան ժամը 8:30էն 12:00:
ՎԵՐԱՄՈՒՏ՝ 2 ԸՆԿՏԵՄԲԵՐ 2003
Նորեկ աշակերտները պարտին ունենալ՝
♦ 2 լուսանկար
♦ Անձնագիր
♦ Նախկին վարժարանէն վաւերացուած հաստատագիր:
ՄԱՆԿԱՍՄՈՒՐԻ ԲԱԺԻՆԸ՝ 1 ՏԱՐԵԿԱՆԵՆ ՍԿՍԵԱ
Վերաբնութիւնները տեղի պիտի ունենան 22 եւ 23 Սեպտեմբեր, առաւօտեան ժամը 9:00- 10:00:

ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ Ս. ՇՈՒԶԱՆ ՄԱՆԿԱՍՄՈՒՐ

Հեռ. (01) 449580 ԷՇՐԵՑԻԷ - ԺԵՀՊԱՌԻԻ



Ս. Շուշան մանկամտուրը կը սկսի Երկուշաբթի, 1 Սեպտեմբեր 2003 առաւօտեան ժամը 7:30էն մինչեւ 5:00 եւ կ'ընդունի նորեկ մանուկներ ինձ ամիսէն մինչեւ 4 տարեկան:

ՅԱՏՈՒԿ ԴԻՐՈՒԹԻՒՆ ԱՃԻԱՏՈՂ ՄԱՅՐԵՐՈՒ

Մանկամտուրը ունի յատուկ անձնակազմ, կարող հիւանդապահուիլ եւ պատասխանատուութիւնը յանձնուած է Ս. Շուշան մանկամտուրի ընդերքին: Մանրամասնութեանց համար դիմել Ս. Շուշան մանկամտուրի տնօրէնութեան: Հեռաձայն (01) 449580, Էշրեցիէ: ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆԻ ԲԱՅՈՒՄ

Շաբաթ, 30 Օգոստոսի երեկոյեան ժամը 17:30ին Էջմեֆի Ժեյհոսուի շրջանին մէջ տեղի ունեցաւ Հայ Կաթողիկէ պատրիարքական վերանորոգում նստավայրի բացումը՝ ձեռնարկ Հայ Կաթողիկէ Ներսէս Պետրոս ԺԹ. պատրիարքի:



Ներկայ էին Ասորի կաթողիկէներու պատրիարք Իգնատիոս Ապտէլյահատ, Մարոնի պատրիարք Նասրալլա Սֆէյրի ներկայացուցիչ իսաիլ Ապի Նատեր եպիսկոպոս, Յոյն Կաթողիկէներու Պէյրութի առաջնորդ Եուսէֆ Քալլա եպիսկոպոս, Ասորի Ուղղափառներու Պէյրութի եւ Լեւոնալիբանանի Ժորժ Սալիպա եպիսկոպոս, հայ աւետարանական եկեղեցւոյ ներկայացուցիչը, Հայ Կաթողիկէ սինոդոսական բոլոր հայրերը, Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս Մուրատ Բարսեղեան, ներկայ եւ նախկին հայ երեսփոխաններ, Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցող պատուիրակուծները, քաղաքական, մշակութային եւ բարեսիրական կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ հաստատուներու հոծ բազմութիւն մը:

Եկեղեցական կարճ արարողութենէն ետք «Տէրունական աղօթք»էն ետք, Հայ Կաթողիկէ Ներսէս Պետրոս ԺԹ. պատրիարքը օրուան պատգամը փոխանցեց հայերէն եւ արաբերէն լեզուներով:

Պատրիարքը յայտնեց, որ Մեծ Եղեռնէն ետք, 1928ին կ'որոշուէր Հայ Կաթողիկէ պատրիարքութիւնը Պոլիսէն տեղափոխել իր պատմական կեդրոնը՝ Չամառի վանք, միանգամայն Պէյրութը սահմանելով իբրեւ պատրիարքական մասյուն նստավայր: Այս նստավայրին կառուցման աշխատանքները, որոնք սկսան 1932ին, վերջ կը

գտնեն 1934ին: Սակայն 1975ին սկսած Լիբանանի քաղաքացիական պատերազմը ծանր վնասներ հասցուց Հայ Կաթողիկէ պատրիարքական նստավայրին: Ան նաեւ չէր համապատասխաներ արդի ժամանակներու հոգեւոր եւ հովուական պահանջներուն, ասոր համար ալ Հայ Կաթողիկէ պատրիարքութիւնը որոշեց յաւելեալ յարկեր եւ գրասենեակներ աւելցնելով վերանորոգել պատրիարքական նստավայրին շէնքը:

Ներսէս Պետրոս ԺԹ. պատրիարքը իր շնորհակալութիւնը յայտնեց Ֆրանսայի Հայ Կաթողիկէներու թեմի առաջնորդ հայր Գրիգոր եպ. Ղապրոյեանի, որ հովանաւորեց վերանորոգման ծրագրի ամբողջական յղացումն ու իրագործումը: Ան նաեւ շնորհակալութիւն յայտնեց Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկի հայկական բաժնի տնօրէն դոկտ. Չաւէն Եկաւեանին, բարերար Արա Ահարոնեանին եւ բոլոր անոնց, որոնք իրենց մասնակցութիւնը բերին պատրիարքական նստավայրին վերանորոգման աշխատանքներուն:

Այնուհետեւ Ներսէս Պետրոս ԺԹ. պատրիարքը Գրիգոր եպ. Ղապրոյեանին, ճարտարապետներ Ապտալլա Տատուրին եւ Վարուժան Նաճարեանին պարգևատրեց Հայ Կաթողիկէ պատրիարքարանի Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հոշակման յուշանշաններով՝ առ ի գնահատանք պատրիարքարանի վերանորոգման աշխատանքներուն մէջ իրենց ունեցած դերակատարութեան:

Հուսկ, Հայ Կաթողիկէ պատրիարքը Ասորի կաթողիկէներու պատրիարքին հետ կտրեց շէնքին բացման ծափաւէնք: Բացումէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

السفير | النصار | الزيار | المستقبل | الاخبار

Ի՞նչ կը գրեն Լիբանանէն օրացերթերը

Իրաքի շիի մեծագոյն անձնաւորութիւններէն ալ յաթոյլա Մոհամէտ Պաքէր Հաքիմի սպանութիւնը Նաժաֆի մէջ եւ այս արարքը դատապարտող կեցուածքները կը գրաւեն 30 Օգոստոսի լիբանանեան օրացերթերուն գլխաւոր դիրքերը:

Պաղեստինեան տագնապն ու իսրայէլեան բռնարարները կը շարունակեն մնալ գլխաւոր լուրերու շարքին, իսկ լիբանանեան գետնի վրայ էլեկտրականութիւնն ու անոր պատճառով իսրայէլը կը հանդիսանան բոլորին ուշադրութիւնը իրենց վրայ իրաւիքող իրադարձութիւնները:

ՄՈՒՆԻՏԵՐ ՊԱՔԵՐ ՀԱՔԻՄԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆ

«Սաֆիր» օրացերթը գրած է, թէ ընդդիմադիր կրօնապետը Նաժաֆի մէջ խեղդուեցաւ հարիւրաւոր աղօթողներու արեան ծովուն մէջ: Ըստ թերթին, Իրաք կը մնալ բռնատիրութեան տակ եւ շիի կրօնապետներէն Մոհամէտ Պաքէր Հաքիմի «հաքեկուրի, իսկ անբողջ աշխարհը կը դատապարտէ տեղի ունեցած ոճիրը:

Թերթը նշած է, թէ իսրայէլեան գերագոյն խորհուրդը կ'ամբաստանէ Սատտամի հետեւորդները, իսկ բռնագրաւող ուժերը իրենք պիտի արդարացնելով կը յայտնեն, թէ այդ վայրին մէջ ներկայ չէին իբրեւ յարգանք սրբութիւններուն: Իրան սուգ կը յայտարարէ, իսկ Ռաշիդ թըն անդրդուելի կը մնալ «հաքեկութեան» դէմ պայքարելու իր որոշումին վրայ, միւս կողմէ միջապահին ընտանիքին կողմէ կատարուած դատապարտումները բանելի լայն ճամբայ կը բանան ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին առջեւ, գրած է «Սաֆիր»:

«Անուար» գրած է, թէ Մոհամէտ Պաքէր Հաքիմի հաքեկութեան հարուած մըն է իմաստութեան, կայունութեան եւ իրապաշտութեան: Ըստ թերթին, հարիւրաւոր նահատակներու արիւնքը ցնցեց աշխարհը:

«Լիոս» դիտելով շիի զոհուած պատանիները կը սպաննուին, իսկ Համաս կը խոստանայ լուծել իր նահատակներուն վրէժը:

Ըստ «Սաֆիր»ի, պաղեստինցի մը կը սպաննուի եւ անոր կինը կը վիրաւորուի իսրայէլեան յարձակումի մը ընթացքին: Իսրայէլացի պինդիստները արգելք կը հանդիսանան աղօթողներուն եւ չեն արտօներ, որ անոնք մկրթ հասնին:

Թերթը գրած է, թէ իսրայէլեան աղբիւրներ դիտել տուին, որ այս արարքին ետին կը կանգնին «Սատտամի մնացորդները», յայտնելով որ անոնց գլխաւոր թիրախը Իրանը եւ նորակազմ կառավարութիւնն է:

«Քիֆահ Արապի» նշած է, թէ Իրանի ապահովութեան խորհուրդը արտակարգ ժողով մը գումարեց Մոհամէտ Պաքէր Հաքիմի հաքեկման լրջսին տակ, իսկ Ապի Չէյտ կը պահանջէ յաւելեալ իսլամական ուժեր ուղարկել ընդդիմութեան դէմ պայքարելու համար: Ըստ թերթին, Շիրաք կը պահանջէ միջազգային համագումար մը կազմակերպել, իսկ Ռաշիդ թըն հարցի լուծման միակ ձեւը կը նկատէ ընդդիմութեան տապալումը:

«Լիոս» գրած է, թէ Շիրաք եւ Փութին կոչ կ'ուղղեն Իրաքի իշխանութիւնը իրաքցիներուն յանձնելու: «Հայաթ»ի համաձայն, Նաժաֆի շարքը կը սպառնայ Իրաքի միասնութեան, իսկ Հաքիմի հաքեկութիւնը կը ցնցէ պատկան մարմիններուն վարկը:

«Նահապ» նշած է, որ շիիները կը դատապարտեն Սատտամի հետեւորդները, Ռաշիդ թըն դատապարտեց, իսկ Իրան երէք օրուան սուգ յայտարարեց: Ըստ թերթին, Իրաքի գերագոյն խորհուրդը բռնագրաւող ուժերը կը դատապարտէ ապահովութեան չհսկելու յանցանքին համար:

ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ՏԱԳՆՊ

«Անուար» գրած է, թէ իսրայէլեան զօրք կը հասնի Կապա եւ Ալբարդիանան, իսկ Համաս կը խոստանայ արագօրէն պատասխանել ցնցիչ եւ անակնկալ յարձակումով մը: «Հայաթ»ի համաձայն, Շարոնի կառավարութիւնը իսրայէլեան պինդիստներուն կատարած խախտումներու եւ բռնութիւններու աւարտը կը կապէ Համասի պինդափումին:

«Լիոս» դիտելով շիի զոհուած պատանիները կը սպաննուին, իսկ Համաս կը խոստանայ լուծել իր նահատակներուն վրէժը:

Ըստ «Սաֆիր»ի, պաղեստինցի մը կը սպաննուի եւ անոր կինը կը վիրաւորուի իսրայէլեան յարձակումի մը ընթացքին: Իսրայէլացի պինդիստները արգելք կը հանդիսանան աղօթողներուն եւ չեն արտօներ, որ անոնք մկրթ հասնին:

ԵՒԵԿՏՐՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

«Անուար» նշած է, թէ կարելի չէ բարեկարգումներ կատարել առանց վատնուած գումարներու վերատիրացման: Ըստ թերթին, բողոքի ցույցեր ծայրանած են էլեկտրակապութեան ընդհատման դէմ եւ ժողովուրդը հարց կու տայ, թէ ո՞ր զացած են այդ գումարները:

«Տիար»ի համաձայն, էլեկտրակապութեան տագնապը կը շարունակուի եւ իսկական ու լուրջ լուծումներ գոյութիւն չունին: «Պէյրութի Սարտիսիա երաժեշտային հաղորդակցութեան իրաւունքները կը փրկուին, իսկ Համասի հաքեկութիւնը պիտի սկսի Լաւի յաճախ այցելել քաղաքացիներուն», գրած է «Մուսաբապալ» օրաթերթը:

«Լիոս»ի համաձայն, Լախուտ հաստատեց, թէ միւսէլ ծայր պիտի երթայ էլեկտրակապութեան հարցով. Կեդրոնական դրամատունը պատրաստ է գումարներ յատկացնելու, սակայն ան կը սպասէ նահապարագ խորհուրդի որոշումին, գրած է օրաթերթը:

«Քիֆահ Արապի» գրած է, թէ Լախուտ էլեկտրակապութեան հարցին լուծման առջեւ քար դնողներուն կը սպառնայ իրապարկաւ խայտառակել:

«Նահապ» դիտելով տուած է, թէ Պապտալի հանդիպումը կը փորձէ լուծում մը գտնել անլոյծ մնացած հարցին. 25 միլիոն տոլար պիտի տրուի հիմա, իսկ Կեդրոնական կառավարութիւնը կը կապէ Համասի պինդափումին:

ԻՍՐԱՅԵԼ ԿԸ ՄՊԱՌՆԱՅ...

Շարունակուած Ա. Էջէն

որ բանական մէկ փոխադրակառոյցին դէմ ակնան մը յարուած էր եւ թէ պինդորները հակադարձած են կրակ բանալով:

ՃԱՍՁ ԿԸ ՉԳՈՒՇԱՅՆ ԻՍՐԱՅԵԼԸ

Պաղեստինեան իշխանութեան արտաքին գործոց նախարար Նապիլ Շաաթ, որ Հնդկաստան կ'այցելէ, զգուշացումի հրաւեր ուղղեց Իսրայէլի, դիտել տալով որ Համասի դէմ անցնող քանի մը օրերուն կատարուած յարձակումները ոճիր կը նկատուին եւ թէ անոնք պիտի հրահրեն վրիժառուութեան պօրաւոր արիք մը: Համասի պատասխանատուներուն եւ հետեւորդներուն ահաբեկումը անպատասխան չի մնար, աւելցուց Շաաթ: Ան ըսաւ նաեւ, որ Իսրայէլի մէջ մահապատիժ չկայ, հետեւաբար կասկածելի մը կամ ամբաստանեալ մը առանց դատավարութեան սպաննելը «անընդունելի» է:

Իսրայէլեան չորս հրթիռներ Շաաթը օրինակած էին Կապալի մէջ, ինքնաշարժի մը վրայ՝ սպաննելով «Իզլէտտին Քասսամ»ի անդամ Ապտալլա Աբրիլ եւ Ֆարիտ Մայեաթը: Անցեալ շաբթուան մէջ նոյն ձեւի յարձակումով մը սպաննուած էր Համասի պատասխանատուներէն՝ Իսմայիլ Ապու Շանապը:

Շաաթ դիտել տուաւ նաեւ, որ Համասի եւ այլ արմատական շարժումներու հետեւորդներու սանձումը խաղաղութեան ճամբու քարտէսին գլխաւոր պայմաններէն մէկն է, սակայն Իսրայէլի որդեգրած միջոցառումները կը դժուարացնեն այս պայմանին գործադրութիւնը պաղեստինեան իշխանութեան կողմէ:

Պաղեստինցի նախարարը նաեւ կոչ ուղղեց Հնդկաստանի օգտագործելու Իսրայէլի հետ չեզոքացող կապերը, որպէսզի խաղաղութեան ճամբու քարտէսը գործադրութեան դրուի: Շաաթ պահանջեց, որ Նիւ Տելիի Շարոնէն խնդրէ, որ չուշացնէ քարտէսին գործադրութիւնը: Շարոն յառաջիկայ շաբթուան մէջ Հնդկաստան պիտի այցելէ:

(Ա.Յ.Փ)

«ԱՉԳԱԿ» - ՄՐՅԱՆԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄՐՅՈՒՄ

Ստորեւ կը ներկայացնենք «Ազգակ»ի կազմակերպած ընդհանուր զարգացման մրցումին եօթներորդ հարցարանը: Այս հարցարանին 5 հարցումներուն ճիշդ պատասխանողներէն վիճակաձգութեամբ պիտի ընտրուի բախտաւոր մասնակից մը, որ պիտի շահի Պէյրութ - Վառնա - Պէյրութ օդանաւային տոմսակ մը:

Իւրաքանչիւր մասնակից կրնայ խմբագրատուն ուղարկել միեւնոյն անուը կրող միայն մէկ կտրոն:

Մրցանքին մասնակցելու համար պէտք է օգտագործել «Ազգակ»ի էջերուն մէջ տեղադրուած կտրոնը եւ ոչ լուսապատճեններ: Հարցարանները պէտք է լեցուին եւ խմբագրատուն ներկայացուին առաւելագոյնը Հինգշաբթի, 4 Սեպտեմբեր 2003, երեկոյեան ժամը 18:00:

- ՀԱՐՑԱՐԱՆ ԹԻ 7
1. Ի՞նչ է Պիթըրզի երգիչներէն Ճոն Լենոնի կնոջ անունը:
 2. Ո՞րն է Չուլիցերիոյ մայրաքաղաքը:
 3. Փիթ Սամփրաս կրան չէլեմի բանի՞ մրցաշարը շահած է:
 4. Ո՞վ է հեղինակը «Գիւղն ու անձրեւը» գիրքին:
 5. Ե՞րբ է Անգլիոյ անկախութեան օրը:

ԱՆՈՒՆ.....
 ՄԱԿԱՆՈՒՆ.....
 ԾՆՆԳԵԱՆ ԹՈՒՎԱԿԱՆ.....
 ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻ.....

TO SUCCEED IN LIFE IT TAKES TALENT, LUCK & GUTS PLUS... A GOOD COLLEGE

POLYGLOT TECHNICAL COLLEGE

Dora: Tel. 01/251320

BALTAYAN ELECTRONIC

Ա. մասնաճիւղ Պոլսի Համուր, Արմենիա պողոտայ, հեռ. : 01 / 262901
 Բ. մասնաճիւղ Տարս, հեռ. : 01 / 259600

ՄԵԾ ԵՐԱԶԻ ՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Նոյեմբերի առաջին տասնօրեակին մեծ երազի մը իրականացման տոնախմբում խոսքեր արտասանեցին: Հայկական եւ քրիստոնէական հին աւանդութիւն է ուխտագնացութիւնը: Այժմ կ'երգենք միայն Մշտյ Սուրբ Սուրբ Կարապետ կատարուած ուխտագնացութիւնը, քանի որ այլեւս չկան վանքեր, Իրանի հայերը ամէն տարի Ս. Թադէի վանքը կ'երթան, անցեալով եւ արմատներով հաղորդուելու, հայոց Եղեռնի թատերաբեմ Տէր Զօրը դարձած է ուխտավայր, իր մատուցած եւ յուշակոթողով: Առանց անցեալի ազգ չկայ եւ այս աւանդութիւնները ազգակիր միայնակներ են: Բայց պատմութիւնը չի գրուիր միայն անցեալի վերծանումով եւ ազգերը կ'ապրին ու կը տեսնեն ներկայով եւ ապագայով՝ ձգտելով իրենց երազներու իրականացման:

Նոյեմբերի առաջին տասնօրեակին պիտի ուզենք եւ պիտի կարենանք ուխտի երթալ Մարսէյ, ներկայ ըլլալու համար եօթը հազար քառակուսի մեթր հողաշերտի մը վրայ կառուցուած վարժարանի մը պաշտօնական բացման: Լուրս, Տէր Զօր կամ Ս. Թադէի վանք երթալու յարմար է նաեւ, ուխտագնացութիւններ պէտք է որ երթան, հաւաքուին Մարսէյ, քանի որ նորակառուց աղ դպրոցին մէջ տոկալու, տեսչու եւ վերապրումի կենսագործումը պիտի շօշափենք: Ներկայ պէտք է ըլլալ, որպէսզի օր մը կարենանք ըսել, որ մենք այ չուն էինք: Աւելի լաւ, եթէ մասնակից եղած ենք կամ կ'ըլլանք աղ մեծ երազի իրականացման: Մի՞թէ կարիք կայ կրկնելու որ մեր հայրենի գոյատեւման տաճարն է հայ դպրոցը: Սփիւռքը պետութիւն չէ, եւ հայկական նոր վարժարանի մը ստեղծումը եւ կառուցումը մեծ իրադարձութիւններ են:

1980ին սկսած դպրոցը այսօր լրիւ վարժարան է, մանկապարտէզէն երկրորդականի աւարտ: Արդէն իր աշակերտները կը յաճախեն համալսարաններ եւ վկայ-բաւերալ ալ կան: Անոնք կազմեցին դժուար պայմաններու մէջ հասակ առնող սերունդը, անոնց ծնողները ընդունեցին, որ իրենց զաւակները ոչ հանգստաւէտ պայմաններու մէջ ուսում ստանան, բայց ստանան հայեցի դաստիարակութիւն: Անոնք մասնակից եղան համայնքի ողբկան յեղափոխութեան, ընդդէմ սպառողական ընկերութեան կարծեցեալ բարիքներուն: Ըսինք՝ հայ մանչ, եւ այդ բառի գործածութիւնը չենք ուզեր սահմանափակել թաղամասով մը կամ քաղաքով մը, այլ կ'ուզենք ուրեք իրենց ազգային համայնք, ոչ միայն Մարսէյ, այլ նաեւ՝ Լիւն եւ Փարիզ, Պէյրութ եւ Նիւ Եորք, Երեւան եւ Գորիս: Այս նորակառուց շէնքերուն մէջ պիտի կարենան հայեցի կրթութիւն ստանալ շուրջ հինգ հարիւր հայ տղաք:

Յաճախ խոսած ենք հայ դպրոցի հիմնական եւ հիմնարար կարեւորութեան մասին: Այդ առաքելութիւնը իրականացնելու համար կենսական է համաժողովրդական նեցուկը, ներկայութիւն եւ մասնակցութիւն: Այս ընդունումով է որ կը խոստովանուինք մասնակցութեան մասին: Հոն պէտք է երթալ իբրեւ հայ ազգի գոյատեւման եւ ինքնահաստատման հաւատարմութիւն: Որպէսզի չընենք անոնց պէս որոնք պատշաճաբան կը դիտէին փողոցէն անցնող հայոց ցեղասպանութեան ճանաչումը պահանջող ցուցարարները: Այս իբրեւ ուխտագնացութեան ցանկութիւնը չի վերաբերիր սոսկ պաշտօնական կամ ներկայացուցչական անձերու, այլ՝ ժողովուրդին, հաւատարմով որ ազգային ողջախոհութիւնը կ'առաջնորդէ շատերը: Անցեալին հեռուոր երկիրներէ եկան մարդիկ, տեսան հողաշերտին վրայ տեղադրուած կոնկրետները, որոնք չէնք որոնք պատերը կը բարձրացընէին: Ոչ մէկ պատճառ կայ, որ ազգային այս մեծ իրականացման առիթով, Յրանապի գանազան շրջաններէն եւ Եւրոպայէն, բայց նաեւ աշխարհի այլ վայրերէն հայեր չընեն եւ չմասնակցին երկօրեայ տոնախմբութիւններուն՝ իբրեւ ուխտագնացներ մեր ազգային ինքնութեան տաճարին:

Արագատըր գնացող Մարսէյ Փարիզի արուարձանի կը նմանի: Ինչու՞ ներկայ չըլլալ եւ վերածնունդի միջնորդութիւն մէջ չթափուելու, եւ ապա՝ վերադառնալ հայրապետութեամբ: Մարսէյի մէջ, կարելի է իրականացնել նաեւ հայկական այլ համայնքներու ծոցին մէջ, որպէսզի նուիրուինք վերականգնումի աշխատանքին եւ հասակ առնել հայեցի կրթութեամբ զինուած նոր սերունդ՝ փաստելու համար, որ սեփական լեզուով եւ մշակութիւնով տեսչու պայքարը չէ աւարտած վերջին պահակազունը պարտութեամբ: Այս նոր տեսակի ուխտագնացները իրենք պիտի վերադառնան վերանորոգուած:

Հայկական նորակառուց դպրոցի մը դռները պիտի բացուին: Տեսարժան վայրեր այցելելու չափ կարեւորութիւն կրնայ տալ այս իրադարձութեան եւ մենք մեզի փաստել, որ րանաստեղծին բառերով, կանք, պիտի մնանք եւ դեռ պիտի շատանանք: Տեսարանական ճառերը եւ հողեպարար վերլուծումները չեն փոխարիներ ներկայութիւնը, որ է ըլլալ, մնալ պատենչի վրայ, րազմանալ եւ խտանալ:

3. ՊԱԼԵԱՆ

ՆՈՐ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ


«ՃԱՄԲԵՂՐԻ ԶՐՈՅՅՆԵՐ» (ԼԻԲԱՆԱՆՅԻ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԸՏ)

Իր «Մաննինէն ջուր խմեցինք» եւ նոյն գիրքի արարներէն թարգմանութիւնը եղող «Շարիպնա Սին Միյաճ Մաննին» գիրքի տարիներ անաղ լոյս ընծայուածն է, ահաւասիկ դարձեալ լիբանանահայ ծանօթ գրող, բանաստեղծ, լրագրող, հրատարակիչ եւ լիբանանահայ մամուլի՝ «Այգ»-ի եւ «Ազգակի» երկար տարիներու աշխատակից Շահանդուխտ կու գայ իր երախտագիտութեան եւ յարգանքի տուրքը մատուցելու լիբանանցի ժողովուրդին եւ Լիբանան հայրենիքին՝ իր վերջերս հրատարակուած եւ կարծրութեամբ համազգայինի «Վահէ Սեթեան» տպարանէն լոյս տեսած «Ճամբեղրի գրողներ» (Լիբանանցի գրողներու հետ) գիրքով:

Այս նոր աշխատութեամբ Շահանդուխտ կու գայ ներկայացնելու իր ունեցած հանդիպումները լիբանանցի գրողներու հետ: Այս հանդիպումները կատարուած են լիբանանահայ քաղաքացիական պատերազմի բռնկումէն առաջ եւ օրինակաբարձրացի ձեռքով հրատարակուած են Տիգրան Թոսպատի «Այգ» օրաթերթին մէջ: Շահանդուխտի հանդիպած լիբանանցի գրողներուն եւ մտաւորականներուն շարքը կը բաղկանայ 13 անուններէ՝ Միխայիլ Մայիմ, Մայիտ Աբլ, Մայ Մայ, Օմար Ապու Ռիշ, Լէյլա Պապայաքի, Ռոպէր Դանն, Ժորժ Շարբուր, Նեփոյ Համալէտան, Նեփոյ Համալէտան, Ապու Մըլիսէ, Լմ Մըլիսէ, Ալվարտ Պուլոս եւ Մանսուր Շալիթ:

Հեղինակը գիրքի մուտքին մէջ կը նշէ, որ վերոյիշեալ գրողներուն, մտաւորականներուն եւ արուեստագէտներուն հետ կատարուած հանդիպումները մաս կը կազմէին «Այգ»-ի տնօրէնութեան գիտակցութեամբ պատրաստուած մեծ ծրագրի մէջ, որ այնպէս ալ կարելի չեղաւ իրականացնել լիբանանեան քաղաքացիական պատերազմին ստեղծած քաղաքական եւ գինւորական ծանր կացութեան պատճառով:

Հայ իրականութեան մէջ կայ երեւոյթ մը, որուն մասին կը վկայէ նաեւ Շահանդուխտ իր նոր հրատարակութեան մէջ: Հակառակ անոր որ հայութեան բեկորները երկար ժամանակ է ի վեր կ'ապրին Լիբանանի մէջ, լիբանանահայեր մեծ գոհողութիւններ ստանձնած են այս երկրի վերակառուցման եւ լիբանանցիներուն միջեւ եղբայրական կապերու ամրապնդման համար, բայց եւ այնպէս լիբանանահայ տակաւին ծանօթ չէ ընդհանրապէս արարական եւ մասնաւորապէս լիբանանեան զրական ու մշակութային մեծ ժառանգութեան: Ասոր հակառակն ալ ճիշդ է, որովհետեւ մեր հայրենակից լիբանանցիներն այ մեր իրական մշակութային արմատներուն մասին գրեթէ չի ինչ զիտես եւ ասիկա անհրաժեշտ կը դարձնէ փոխադրուած ծանօթացման աւելի լայն շրջափակ մը ստեղծումը մանաւանդ զրական եւ մշակութային



մարզերուն մէջ: Շահանդուխտ իր «Ճամբեղրի գրողներ» գիրքով կու գայ իր լուծումները հանդիպումները լիբանանցի գրողներու հետ: Այս հանդիպումները կատարուած են լիբանանահայ քաղաքացիական պատերազմի բռնկումէն առաջ եւ օրինակաբարձրացի ձեռքով հրատարակուած են Տիգրան Թոսպատի «Այգ» օրաթերթին մէջ: Շահանդուխտի հանդիպած լիբանանցի գրողներուն եւ մտաւորականներուն շարքը կը բաղկանայ 13 անուններէ՝ Միխայիլ Մայիմ, Մայիտ Աբլ, Մայ Մայ, Օմար Ապու Ռիշ, Լէյլա Պապայաքի, Ռոպէր Դանն, Ժորժ Շարբուր, Նեփոյ Համալէտան, Նեփոյ Համալէտան, Ապու Մըլիսէ, Լմ Մըլիսէ, Ալվարտ Պուլոս եւ Մանսուր Շալիթ:

Փոքր չափի 150 էջերու ծանօթ մէջ լոյս տեսած կարճ ակնարկներով Շահանդուխտ կը ներկայացընէ լիբանանեան նախապատերազմեան կեանքը, լիբանանցի մարդուն բարոյական յատկանիշները, լիբանանեան պիւրը իր բնութեան գեղեցկութեամբ, լիբանանցի գրողներուն հետ կատարուած գրողներուն ընդմէջէն կ'անդրադառնայ անոնց ներաշխարհը տազնապնդածնող յոյզերուն, անոնց ունեցած սիրոյ հասակացութեան եւ Լիբանանի նկատմամբ տածած հայրենասիրութեան ըմբռնումին:

Եւ այս բոլորը Շահանդուխտ կը կատարէ ամենայն հարգատուութեամբ: Ընթերցողը կը գգայ, որ օրինակ՝ Միխայիլ Նայի-մէի, Մայիտ Աբլի եւ Մայ Մըլի արտայայտութեան նախնեան հայրենասիրութեան գագուտները խորթ չեն Շահանդուխտին, որ Մայիտ Աբլի հետ հանդիպումներէն մէկուն ընթերցեցին քառորդ ժամէն լատինատառ «Լիբանանեան» ստեղծումը, ինչ ճակատագիր կրնա ունենալ լիբանանահայ գրողներու հետ հանդիպումներու շարքը...

Բայց մեր առօրեայ կեանքը կարելի չէ «եթէ»ներով առաջնորդել: Հիմա ընթերցողի գրասենյակին վրայ կայ Շահանդուխտի այս իրադարձութեամբ, այս փոքր հատորը, որ ուրիշ բան մը չէ, եթէ ոչ երախտագիտութեան արտայայտութիւն մը այս երկրի սոսկիակա ժողովուրդին եւ յարգանքի տուրք մը՝ լիբանանեան զրական, մշակութային եւ մտաւորական կեանքին մէջ «եղանակ ստեղծած» լիբանանցի մեծ երախտագնացներուն:

Անկէ գտաւ, արդեօք պէտք է շարունակել մշակութային եւ մտաւորական մարզերուն մէջ հայ լիբանանեան փոխադրուած ծանօթացումը ու մերձեցումը, անկասկած, մինչեւ այն ատեն որ թէ՛ հայերս եւ թէ՛ մեր լիբանանցի հայրենակիցները մէկգում կուտակուած բազմազարեան մշակութային եւ զրական ժառանգութեան ծանօթանալու պէտքը կը գգանք եւ ասիկա ոչ միայն այն պատճառով, որ կ'ապրինք միեւնոյն հողին վրայ, կը չնենք միեւնոյն օդը եւ կը խմենք նոյն ջուրը, այլ մանաւանդ անոր համար, որ մեզի կը միացընէ... հասարակաց ճակատակցութիւնը:

Շահանդուխտ բազմիցս շնորհակալ է իր միտքը «Ճամբեղրի գրողներ» հատորին մէջ:

ԺԱԸ 3. ՅԱԿՈՒԵԱՆ

ԿՈՒՉՈՒԻ

Վաճառատան մը համար վաճառող ներկայացնում օրինակ մը: Վաճառում լաւ պայմաններով: Դիմել՝ հեռ. 01 - 255805 եւ 01 - 265070:

Orientplus
Touch New Worlds

Zarna
\$319

8 days - Direct Charter Flight
Every Tuesday starting from 8 July

Other Destinations
Boat Trip to Cyprus 3 Days
\$190 \$425

BOOK THIS WEEK AND GET 15% DISCOUNT
ASK FOR OUR FREE CREDIT FACILITIES

01.900598, 901598
03.258336, 256254
www.orientplus.com

«ՄԵԾԱՐԱՆՔ, ՈՐ ԱՆՉԻՍ ՄԷՉԷՆ Կ'ԵՐԹԱՅ ԳԻՒՂԻՍ ԵՒ ԱԶԳԻՍ»

«Երբ օր մը դուք յանկարծ՝ բանաք սիրտն իմ տառապած, Պիտի գտնէք ինձ կանգնած Արարատը ճիւղահեր վրան՝ խաչ մը լուսավառ»:
Յ. ԲԱՄՊԱԿԵԱՆ

Կազմակերպութեամբ Համազգայինի Այնճարի «Պարոյ Սեւակ» մասնաճիւղի մշակութային յանձնախումբին, Ուրբաթ, 8 Օգոստոսին, «Սարգիս Զէյթիւեան» ժողովրդային տան մէջ տեղի ունեցաւ բանաստեղծ Յարութեանի (Փամպուկեան) «Յաւերժական երգեր» Բ. գիրքին գինեծօնը, որուն ընթացքին յարգանքի ու գնահատանքի խօսք փոխանցուեցաւ մայր հողին կարօտը ապրող մուսալեռցի բանաստեղծին:

Հակիրճ կերպով ներկայացնելով բանաստեղծին կեանքն ու գործերը, Յարութեանի Համալեռնական երգերը, որոնք հեղինակին գործերէն ազգային եւ հոգեւոր նիւթերով բանաստեղծութիւններ կարդացին: Ապա հայր Մեսրոպ վրդ. Թոփալեան ներկայացուց բանաստեղծը իբրեւ պարզ, համեստ, մտերիմ, եւ յատկապէս հաւատացեալ բանաստեղծ, որ գրելու իր ձիրքը ի վերուստ տրուած պարզեւ կը նկատէ պարզապէս. ան մէջբերելով Նիկոլ Աղբալեան մեծ ուսուցիչին խօսքերը՝ «Ինչ որ կայ, Աստուծոյ տուածն է»: Վարդապետը բարձր գնահատեց բանաստեղծին հայրութեամբ սրբփող սիրտը, սիրտ մը, որ համոզուած է, թէ զիւրազուններն ու հերոսները կը կերտուին հաւատքով միայն:

Ապա, իբրեւ մաղթանք, բանաստեղծին խօսքերը նոյնինքն իրեն ուղղելով՝ վարդապետը եզրափակեց. «Երբ եղբայր, մի շտ երգի դուն, երգը գարնան վարդերու պէս, հէք, վշտահար մէջ սրտերուն քող թրթրոյ աճ լուսերին»:

Ապա «Լեւոնի հայրենի» երգը հրաճուեցաւ Սեւակ Մէթիանին կողմէ, որմէ ետք «Գիրքերու մկրտութեան» համար բեմ հրահրուեցան Աշոտ քնյ. Գարապաշեան, հայր Մեսրոպ վրդ. Թոփալեան եւ բանաստեղծ



Յակոբ Բամպուկեան, եւ այլօրքի հետ զուգահեռ գիրքերը օժուեցան կարմիր գինիով:

Համազգայինի «Պ. Սեւակ» մասնաճիւղի կողմէ պատրաստուած յուշանուէր մը յանձնելէ ետք բանաստեղծին, դարձեալ բեմ բարձրացաւ հայր Մեսրոպ վրդ. Թոփալեան եւ կարգաց Հայ Կաթողիկէ Ներսէս Պետրոս ԺԹ. պատրիարքին գիր-պատգամը՝ ուղղուած Յարութեանի հայրենաստեղծին:

Այնուհետեւ, շնորհակալական իր խօսքը փոխանցեց բանաստեղծը ըլլող ներկայիցներուն, որոնք, ըստ իրեն, կը պատուէին հայ գիրն ու գրականութիւնը: Բանաստեղծը ազգին, հայրենիքին եւ ընդհանրապէս մարդկութեան ծառայելուն մէջ է, որ կը գտնէ իր հոգեկան գոհացումը: Եւ մարդկութեան ծառայելու, ըստ բանաստեղծին, կը նշանակէ ծառայել Աստուծոյ, այսինքն՝ մարդանալ, ազնուանալ ու բարձրանալ: Ան իր խօսքերը եզրափակեց ըսելով. «Եւ խոնարհաբար հաւատքի դռնէն ես ներս կը մտնեմ գանգահարելու կոչնակը յոյսին ազատութեան...»:

Յակոբ Բամպուկեան բանաստեղծի գրական գործունէութիւնը իր առաջին քայլերը սկսած է 1956 թուականին: Անոր արձակ եւ չափածոյ էջերը հրատարակուած են «Մասիս» շաբաթաթերթին, «Աւետիք» ամսաթերթին եւ «Ռահվարայ» պարբերաթերթին մէջ: Բանաստեղծը «Հողին կարօտով» եւ «Յաւերժական երգեր» հատորներուն կողքին ունի նաեւ հրատարակութեան պատրաստ չափածոյ եւ արձակ երկեր:

«Նոր երգերով յաւերժական ողջունէ լոյսն առաւօտեան, միշտ ժպտեցիս, նման գարնան, շարունակե՛ կեանքիդ ճամբան»:

galerie

PIERROT

Specialiste de Meubles D'enfants de 0 à 20 ans

galerie

PIERROT

Liste de Naissance et de Bâptême

Autostrade Jal-el-Dib - Tel : 04 / 713233 - 03 / 701607

ԶԱՒԱՐԵԱՆ ՌԻՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (ԶՈՍ)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԶՈՍԻ Ուսանողական արեւելումի գրասենյակը սիրով կ'ընդունի այն հայ աշակերտները, որոնք կը փափաքին յաւելեալ տեղեկութիւններ եւ ցուցմունքներ ստանալ համալսարանական մուտքի (քննութիւններ եւ այլ), մասնագիտութիւններու եւ կրթագիտութիւններու մասին:

Շտաբըրըրուդները կրնան դիմել Զաւարեան Ուսանողական Միութեան կեդրոն, ամեն Գործընթացի մասը 5:30էն 8:30:

Հասցէ՝ Պուրճ Լամուտ, Արաբ փողոց, Երեւանեան կեդրոն, 4րդ յարկ
Հեռ. 01 / 240167

ՈՒՐԿԵՆՆԵՐ

Վերջին օրերուն համաշխարհային գիտական հանրությունը, ինչպես նաև ժողովրդային լայն խաւերը «Հրատի տեղեկ» բունուած են կարծեք: Արդարեւ, Կարմիր մոլորակը երկրագունդին երբեք այսքան չէ մօտեցած 60 հազար տարիէ ի վեր եւ հիմա կը գտնուի մօտաւորապէս 35 միլիոն մղոն հեռավորութեան վրայ:

Հետաքրքրական է դիտել զիշերային երկինքը, ուր Հրատը ձեզ չի խաբէր: Ամէնէն փայլուն երկնային մարմինը է՝ լուսինն է:

Գիտնական մը մեկնաբանելով Հրատի ծիրի փոփոխութիւնը՝ ըսաւ, թէ վերջին անգամ մոլորակը այսքան մօտիկէն կրցած է դիտել միայն Երկամերթաբան մարդը: Բայց հետաքրքրական է, չէ՞: Այդ օրերէն առիթ երկիր մոլորակին վրայ շատ բան փոխուած է: Նեանտրոփաբանները անհետացած են, փոխարինուած են մեզմով՝ հետեւութեամբ Տարուիցի տեսութեան: Երեւան եկած ու նիւզաւորուած են լեզուներ, ազգեր, պետութիւններ, սահմաններ, սահմանաչից պատերազմներ, բռնագրաւում, իրաւազրկում: Նաեւ՝ գիտութիւնը զարգացած է եւ մարդ արարածը այսօր աւելի բարօր կեանք կը վարէ, քան, ըսենք, 60 հազար տարի առաջ:

Եթէ թիչ մը թափ տանք մեր երեւակայութեան եւ ներքայինը, որ Հրատի վրայ ապրող արարածներ 60 հազար տարի առաջ, օգտուելով երկրագունդին մօտեցաւ եզակի առիթէն, կրցան ինչ-ինչ միջոցներով դիտել մեր մոլորակը եւ արձանագրել, որ անկիւ բնակուած է երկտեսնի վայրեամարտու ճանկան արարածներով, որոնք հետամուտ են միայն իրենց ֆիզիքական գոյութեամբ ու կը կոտորեն իրարու եւ նոյնիսկ անասուններու հետ՝ մամուռի մը սատակին տիրանալու համար:

Հիմա, նոյն հրատեանները, դարձեալ օգտուելով առիթէն, դարձեալ պիտի դիտեն մեզ ու իրենց արձանագրածները պիտի բաղդատեն 60 հազար տարի առաջ իրենց նախահայրերու ձգած սոմարներուն հետ: Բնականաբար շատ բան փոխուած պիտի տեսնեն՝ զարգացած քաղաքակրթութիւն, գիտութիւն, մշակոյթ եւ այլն: Սակայն թիչ մը թափ աւելի խորացնելով իրենց ուսումնասիրութիւնները՝ զարմանքով պիտի նկատեն, որ հիմնական բան մը կայ, որ չէ փոխուած երկրային երկտեսնիներու կեանքին մէջ: Այդ ալ զիրար բնազնչելու մոլուցքն է. իրարմէ բան մը խլելու. զիրար իրաւագրկելու մարմաջը: Սխալած ենք արդեօք: Երանի:

Բայց ուրիշ՝ ուր. Հրատէն 21րդ դար: Անմեկ-կեկեկ են ախեղբոր խորհուրդները...

ՎԱԶԵ ԲՐՈՒՏԵԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԸ ԵՐԲԵՔ ՄԵԿՈՒՍԱՅՈՒՄԾ ՉԻ ԵՂԵԼ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

«ՀԱՅՈՑ ԱՅՆԱՐԸ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ Ը. Յ. Ղ. ԽՄԱԿՅՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉ ԸՆԿ. ԼԵՌՆ ՍԿՐՑԵԱՆԻ ԸՅՏ

ՀԱՐՑՈՒՄ.- Պարոն Մկրտչեան, ինչո՞վ է պայմանաւորուած դարաբանական հակամարտութեան կարգաւորման ձեւը փոխելու ուսուցանելին Երկայացուցչի առաջարկութիւնը: Եւ որքանո՞վ է դա նկատակալարմար հաշուի առնելով Ազգային ժողովուրդի արտահայտած կարծիքը:

Պ.- Մանրամասն ծանօթ չեմ: Վ. Քաղիմիրովի տեսակէտին: Միայն այնքանով, որքանով արտատրաբել է հայկական մամուլը: Բայց սկզբունքորէն այդպիսի տեսակէտներ իր յայտ գայը նորութիւն չէ: Անցած տարիներ ընթացքում, հակամարտութեան կարգաւորման բանակցային գործընթացի զուգահեռ միշտ էլ եղել են կարգաւորման վերաբերեալ, այսպէս ասած, ուղեկից առաջարկութիւններ կամ յայտարարութիւններ: Ծառ յաճախ դրանք հնչում են նաեւ կարգաւորման գործընթացում նախկինում՝ ներգրաւուած առբեր պատասխանատուների կողմից:

